

ՀԱՅԵՐՆՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՑ ԹՌՈՒՑԻԿՆԵՐ

Բ. Ս. ՏՈՆԵՐՑԱՆ

Գլխավորելով երկրի պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական ընդվզումը ցարական ինքնակալության դեմ, սոցիալ-դեմոկրատները XIX դ. վերջից և բոլշևիկները XX դ. սկզբից հրապարակել են ռուսերեն և այլ լեզուներով բաղմաթիվ թոուցիկներ: Հազարավոր տպաքանակով հրապարակված և մեղ հասած այդ փաստաթղթերը ուշագրավ են իրենց մարտական բովանդակությամբ, որոնք աշխատավորներին հասկանալի լեզվով շոշափում են ժողովրդին հուզող տնտեսական ու քաղաքական խնդիրները:

Ռուսական սոցիալ-դեմոկրատները, բոլշևիկների կուսակցությունը, Վ. Ի. Լենինը ըստ արժանվույն են գնահատել թոուցիկների, կոչերի ու թերթիկների բացառիկ դերը և հաճախ օգտագործել դրանք՝ ժողովրդական զանգվածներին դասակարգային կռիվ կոչելիս: Վժժե առաջ ամբողջ Ռուսիայում թոուցիկները լույս էին տեսնում տասնյակ հազար օրինակներով, — գրել է Լենինը, — թող այժմ նրանք տարածվեն միլիոնավոր օրինակներով, որպեսզի ամբողջ ժողովուրդն իմանա ռուսական գիտակից պրոլետարիատի պատասխանը... որպեսզի բոլորը տեսնեն մեր որոշակի գործնական պահանջները¹: Հետագա տարիներին, դասակարգային պայքարի սրման, ՌՍԴԲԿ տեղական կազմակերպությունների գործունեության առավել աշխուժացման պայմաններում և մանավանդ 1905 թ. հեղափոխության բուռն օրերին Ա. Բոգդանովին և Ս. Գուսևին հասցեագրած նամակում Վ. Ի. Լենինը անհրաժեշտ էր համարում ուժեղացնել երիտասարդության մեջ մարքսիզմի տարածումը և ընդգծում, որ կուսակցության ճամբն մի ենթակոմիտեի իրավունք տվեք թերթիկներ գրել և հրապարակել առանց որևէ քաջշուկի²:

Այդ հնարավորությունից առավել մեծ չափով օգտվեցին ինչպես երկրի մյուս շրջանների, այնպես էլ Անդրկովկասի բոլշևիկները, որոնք 1902—1921 թթ. վրացերեն, ադրբեջաներեն և հայերեն բաղմաթիվ թոուցիկներ ու թերթիկներ են հրատարակել: Հիշատակելի են այն ջանքերը, որ գործադրել են Կովկասյան միութենական, Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի կոմիտեները, Ալեքսանդրապոլի, Գուրիայի, Երևանի, Շուշու, Գանձակի, Բորչալուի, Կարսի և այլ կազմակերպություններ ու խմբեր, ինչպես նաև Անդրկովկասի արդյունաբերական մի շարք քաղաքների ձեռնարկությունների բանվորական գործադուլային կոմիտեները, զորամասերի կամ կայազորների սովետները և այլն: Մի շարք թոուցիկներ ու կոչեր հայերեն հրատարակել են նաև «Պրոլետարիատ» (1902), «Պրոլետարիատի կռիվը» (1903—1905), «Պրոլետարիատի կռիվ թերթիկ» (1904—1905), «Կայծ» (1906), «Պայքար» (1915—1917), «Նոր կյանք» (1917),

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 441:

² Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 171:

«Սոցիալ-դեմոկրատ» (1917), «Բանվորի կոիվը» (1917—1918), «Տեղեկատու» (1918), «Խոսք» (1918—1919), «Կոմունիստ» (1920) և այլ կոմունիստական թերթերի խմբագրությունները:

Դրավոր այդ վավերագրերի բովանդակությունը բազմակողմանի վերլուծվել է մեր երկրի և, մասնավորապես, Անդրկովկասի գիտահետազոտական հիմնարկների և առանձին պատմաբանների ջանքերով: Ռուսերեն, վրացերեն ու ադրբեջաներեն լույս են տեսել փաստաթղթերի, նյութերի և հիշողությունների մի քանի ժողովածուներ:


ՌՍԴԲԿ երլլշևիկյան կենտրոնական ու տեղական կազմակերպությունների կոչերի ու թռուցիկների բնագրերը հրապարակվել են նաև հայերեն՝ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» (1930), «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում» (1932), «Սպարտակ 1917—1920» (1935), «Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» (1955), «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (1957), Ս. Շահումյան—Երկեր, 3 հատորով (1955—1958), «Հեղափոխական կոչեր և թռուցիկներ» (1960) և այլ ժողովածուներում ու հրատարակություններում: Կազմողներից և ոչ մեկը, սակայն, այդ ժողովածուների կոչերն ու թռուցիկները լիակատար չի համարել, չբացատրելով հայերեն նոր թռուցիկների, թերթիկների կամ կոչերի հայտնաբերման հնարավորությունը: Այդպիսի չհայտնաբերված վավերագրերի թվին են պատկանում ՍՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության Մոսկվայի կենտրոնական պատմական արխիվում պահվող, առանձին թերթիկների վրա տպագրված ՌՍԴԲԿ Անդրկովկասյան կազմակերպությունների 1902—1905 թթ. հայերեն ինը թռուցիկներն ու կոչերը, որոնց բովանդակությունը այստեղ վերադրադրվում է առաջին անգամ:

Դրանք ընդգրկում են երկու ժամանակաշրջան: Առաջին. 1902—1904 թթ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության նախօրյակը, երբ սոցիալական ու ազգային բիրտ շահագործման ու կեղեքման, ռուս-ճապոնական պատերազմի հետևանքով նոր որակ ու բովանդակություն էին ստանում Ռուսաստանի պրոլետարիատի գործադուլները, ուժեղանում հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչների ելույթները: Այդ ժամանակ ամբողջ Ռուսաստանում և Անդրկովկասում ձևավորվում էին սոցիալ-դեմոկրատական, բոլշևիկյան կազմակերպությունները, ծավալելով ընդհատակյա գործունեություն, նպաստում մարքսիստական գաղափարների տարածմանը, հրապարակում թերթեր, բրոշյուրներ, ամսագրեր, թռուցիկներ ու կոչեր: Երկրորդ. 1905 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ժամանակաշրջանը, երբ օրակարգի հարց էր ցարիզմի տապալումը և ընդլայնվում էին բոլշևիկների տեղական կազմակերպությունների կազմակերպական-գաղափարական գործունեության շրջանակաները:

Թռուցիկներից առաջինը հրատարակեց ՌՍԴԲԿ Դոնի Ռոստովի կոմիտեն՝ ուղղելով «Ռուսաստանի բոլոր քաղաքացիներին»: Դրանում շարադրված են գործադուլի ու ցույցերի, ինչպես և գնդակոծության հետ կապված դեպքերն ամենայն մանրամասնությամբ, ցույց են տրված նաև պրոլետարիատի դասակարգային ելույթները երկրի տարբեր վայրերում: Այնտեղ կարդում ենք. «Թող Դոնի վրա բռնկված հրդեհը ավելի բոցավառվի, թող հրացանների ձայնին, իբրև հզոր արձագանք, որոտան ցույցեր, թող զոհերի հառաչը խլացնի բողոքի

ձայները, թող ամենուրեք, ինչպես Ռոստովում, ամբողջ երկիրը ճնշող միապետության մահվան դատավճիռ կարդալ Կեցցե՛ք՝ զալիք հեղափոխությունը՝:

ՌՍԴԲԿ կոմիտեներն ու կազմակերպությունները պարբերաբար թուղիկներ ու կոշեր էին հրապարակում նաև նոր տարվա, Մայիսի մեկի ու այլ տոների կապակցությամբ:



ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի 1903 թ. հունվարի 1-ի առթիվ հրապարակած հայերեն «Շնորհավոր նոր տարի» թուղիկում հանրագումարի բերելով 1902 թ. պրոլետարիատի դասակարգային ելույթները՝ Պետերբուրգում, Վիլնոյում, Սորմսվոյում, Բաքվում, Դոնի Ռոստովում, ինչպես և գյուղացիական հուզումները Ռուսաստանի ու Կովկասի տարբեր նահանգներում, հեղինակներն ընդգծել են,

³ ՍՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության պետական կենտրոնական արխիվ, ֆ. № 25676:

որ ճնոր տարին պետք է ներշնչե մեր մեջ նոր ուժ՝ շարունակելու այն գործը, որն այնպես փառավոր սկսված է: Կազմակերպվել և նորից կազմակերպվել,— ահա ինչը պետք է լինի մեր նպատակը... Հետևողական պայքարը, դասակարգային կռիվն է մեր միակ փրկությունը»⁴:

ՌՍԴԲԿ II համագումարը նախապատրաստող կազմակերպական կոմիտեն, որն ստեղծվել է Պակովում (1902 թ. նոյեմբեր) և Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ բազմակողմանի աշխատանք էր ծավալում, 1903 թ. ապրիլի վերջին հրապարակեց Մայիսի մեկին նվիրված ընդարձակ թուղթիկ՝ «Պատրաստվեցե՛ք Մայիսի մեկի համար. Ռուսաստանի բոլոր բանվորներին և բանվորուհիներին» վերնագրով, որը նույն օրերին ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն թարգմանեց և հրապարակեց նաև հայերեն»:

Այս մարտական թուղթիկում նշված է, որ «միջազգային պրոլետարիատի հետ միասին այդ օրը պետք է փողոց դուրս գա նաև Ռուսաստանի պրոլետարիատը: Ռուստովի բանվորների նման դուք էլ ցույցի դուրս եկեք: Եթե չեք կարող ցույց անել, գոնե այդ օրը աշխատանքը ընդհատեցե՛ք, կովեցե՛ք և ստիպեցե՛ք, որ ամբողջ Ռուսաստանը ականջ դնե ձեր պահանջներին... Կրկնվեցե՛ք հանուն սոցիալիզմի, քաղաքական ազատության»⁵: Ընդգծելով, որ քաղաքական ազատության համար մղվող կռիվը միաժամանակ պայքար է սոցիալիստական կարգերի համար, ՌՍԴԲԿ II համագումարը նախապատրաստող կազմակերպական կոմիտեն ութ կետերից բաղկացած կոնկրետ պահանջներ է շարադրել՝ բռնություններին վերջ տալու, Ռուսաստանում խոսքի, մամուլի, ժողովների, կազմակերպությունների գործունեության լիակատար ազատություն ստեղծելու, անձի անձնական խելություն սահմանելու, պաշտոնյաների ապօրինի գործողությունները և տուգանքները վերացնելու, երկրի բոլոր ազգերի ու ազգությունների համար իրավահավասար օրենքներ սահմանելու վերաբերյալ: Կազմակերպական կոմիտեն դիմել է իր ընթերցողներին՝ պրոլետարներին և գյուղացիությանը. «Նայե՛ք, հեռվում լույս է երևում: Այն ո՞վ է, որ ամուր ձեռքերում բռնել է լուսավառ ջահը, ո՞ւմ են այն պարզ հայացքները, վստահ ու ջահել դեմքերը, ովքե՛ր են նրանք, որ այնպիսի վստահությամբ քայլում են զայրացած ամբոխի առջևից... Այդ դուք եք, բանվորներ, ձեր խրոխտ քայլերը... Ոգևորիչ ձայները հնչում են առաջավոր շարքերում, որոնք պետք է տապալեն ծանր և ամուր դուռը... Նրա ետևն են ազատությունը, լույսը, այնտեղ պարզ երկնքի տակ լսվում է ահեղ ծովի խորհրդավոր մունջունը... Զգո՞ւմ եք, արդյոք, ձեր դեմքին ծովի զովությունը... Դուռը վերջին ճիգերն է թափում... Նա շուտով կտապալվի... Հառա՛ջ, ընկերներ...»⁶:

Կովկասյան միությունը 1903 թ. ապրիլին հայերեն հրապարակեց նաև «Մայիսի մեկը. ընկերներ» վերնագրով թուղթիկը, որտեղ ասված է. «Ահա, 14 տարի է, որ համայն աշխարհի պրոլետարիատը տոնելով այդ օրը, ավետում է ամեն տեղ սոցիալիզմի ապագա հաղթությունը: Ահա, երեք տարի է, որ բոլոր աշխատավորների ազատագրման բարի համբավը հասել է մեր հեռավոր Կովկասը: Այստեղ առաջիններն էին մեր Թիֆլիսի ընկերները, որոնք 1901 թ. Մայիսի մեկին հրապարակ դուրս եկան և անագորույն կապիտալիզմի ու բռն-

⁴ Նույն տեղում, ֆ. № 25671:

⁵ Նույն տեղում, ֆ. № 25685:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

նակալ ցարիզմի դեմ բացարձակ ծածանեցին պրոլետարիատի գրոշը»⁸։

ՌՍԴԲԿ II համագումարը նախապատրաստող կազմկոմիտեի և 1903 թ. ապրիլին հրատարակված ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի «Ընկերներ» հայերեն թուղթիկում կոչ է արվում բանվորներին և բոլոր աշխատավորներին համախմբել ուժերը հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո. «Թողեցեք մայթերը և աշխատեցեք տիրապետել հրապարակները ու լայն փողոցները... Ձեզ հետ բերեք և տատանվողներին, ոգևորեցեք նրանց ձեր վառ խոսքերով և մի կամքով հայտնեցեք ձեր պահանջները ամբողջ աշխարհի առաջ, Կեցցե սոցիալիզմը»⁹։

Անդրկովկասի քաղաքներում ևս ցույցերի դուրս եկած բազմահազար բանվորներ, բազմազգ աշխատավորներ արձագանքեցին մարքսիստական կուսակցության կոչին։ Առանձնապես բազմամարդ էին Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի պրոլետարիատի, Օդուրգեթի, Գուրիայի, Մենգրելիայի և այլ վայրերի գյուղացիների ցույցերն ու միտինգները, որ ճնշվում էին ցարական ոստիկանական խմբերի կողմից՝ աքսորելով և բանտ նետելով առավել ակտիվ ցուցարարներին ու հեղափոխականներին։ Ուշագրավ է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի «Աքսորվող ընկերներ» վերնագրով թուղթիկը, որը հրապարակվել է նաև հայերեն, 1903 թ. հուլիսին՝ քաղաքական բանտարկյալների մի մեծ խմբի Թիֆլիսի Մետեխի բանտից Սիբիր աքսորելու կապակցությամբ։ «Ռուսաստանի բանվորների դիտակից մասը արդեն վաղուց հասկացել է, — կարդում ենք այդ թուղթիկում, — որ իր վերջնական նպատակին՝ սոցիալիստական գաղափարի իրականացմանը հասնելու համար անհրաժեշտ է ցարի կառավարության, բոլոր շահագործողների և ճնշողների տապալումը։ Ժողովրդի դժգոհության ալիքները գնալով մեծանում և տարածվում են երկրի ամենախուլ անկյունները։ Օրեցօր հեղափոխական բանակի շարքերն են մտնում նորանոր ուժեր։ Միապետական կառավարությունը... ուժեղացնում է ոստիկանության, լրտեսների ու ժանդարմների կազմը... Գազանաբար ծեծում են խաղաղ ցույց անողներին, զրնդակահարում գործադուլավորներին, Սիբիր՝ տաժանակիր աշխատանքի աքսորում և կախաղան բարձրացնում ազատության համար կռվողներին»¹⁰։ Դիմելով աքսորվող ընկերներին, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն թուղթիկում գրել է. «Որտեղ էլ լինեք, Վոլոգդայում, թե՛ Վիատկայում, Սիբիրում թե՛ Աստրախանում, ամենուրեք կլսեք հեղափոխական ազատ խոսք։ Քաջացե՛ք, ընկերներ»¹¹։

ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն 1903 թ. դեկտեմբերին «Բանվոր ընկերներ» թուղթիկում գրել է. «Դեռ տասը տարի չկա, որ բանվորական շարժումը Ռուսաստանում մասսայական է դարձել, բայց այս շարժումը արդեն դուրս է եկել իր նեղ շրջանակից և մտել իր դասակարգային լայն հունի մեջ։ «Թող կորչի միապետությունը» կոչը արձագանք գտավ Ռուսաստանի բոլոր քաղաքներում, կովի որոտը դաշտերի, կիրճերի միջով անցավ, հասավ միլիոնավոր գյուղացիների, և գյուղացիական ապստամբության ուրվականը պատկերացավ ցարի կառավարության առաջ։ Իսկ սա իր դաժան միջոցներով կոզակների, զինվորների և կառավարական շինովնիկների օգնությամբ խստագույն դատաստան է տեսնում հեղափոխականների նկատմամբ։ Սակայն այդ բոլորին, — ավարտում

⁸ Նույն տեղում։

⁹ Նույն տեղում, ֆ. № 28231։

¹⁰ Նույն տեղում, ֆ. 308։

¹¹ Նույն տեղում։

է թռուցիկը,— պրոլետարիատը կպատասխանե լավ կազմակերպվածութեամբ»¹²։

1904—1905 թթ. ռուս-ձապոնական և 1914—1918 թթ. առաջին համաշխարհային պատերազմի, ինչպես նաև 1905—1907 թթ. և 1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների օրերին բուլճերի կազմակերպությունները, բացի մեծածավալ թռուցիկներից և թերթիկներից, տարածել են նաև փոքրածավալ թերթիկ կոչեր, որոնցում տպագրվում էին լուզունգներ, ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի՝ ռուս-ձապոնական պատերազմի և 1905 թ. հեղափոխական վերելքի կապակցությամբ, 1904 թ. դեկտեմբերի վերջին՝ մոտեցող հունվարի մեկի առթիվ հայերեն հրապարակել է «Շնորհավոր նոր տարի» կոչը¹³։ Այս կոչի յուրաքանչյուր նախադասություն կամ լուզունգ՝ «Կորչի ցարի ինքնակալությունը», «Կորչեն կապիտալիստները», «Կորչեն սպանիչները», «Կորչի պատերազմը», «Կեցցե ՌՍԴԲԿ կուսակցությունը», «Կեցցե սոցիալիզմը» արտահայտում է ցարական ինքնակալության տապալման և դեմոկրատական կարգերի հաստատման մասին պրոլետարիատի սկզբունքը։

Այս հիմնական խնդիրները արծարծվում են նաև ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի 1905 թ. կեսերին հայերեն հրապարակած «Կորչի պատերազմը. կորչի ցարի կառավարությունը»¹⁴ թռուցիկում։ Այստեղ պրոլետարիատի առաջ խնդիր է դրվում պայքարել դեմոկրատական ընտրությունների՝ ընդհանուր, հավասար, ուղղակի, գաղտնի ընտրական իրավունքի, խոսքի, մամուլի, ժողովների, միությունների, գործադուլների ազատության և 8-ժամյա բանվորական օրվա համար։

Անժխտելի է գիտական շրջանառության մեջ դրվող հայերեն այս թռուցիկների ու կոչերի մեծ արժեքը։ Դրանցում հնչել է մարքսիստական կուսակցության հզոր խոսքը, մարտական կոչը, բացահայտվել ցարիզմի, բուրժուազիայի, երկրի հակաժողովրդական բոլոր կուսակցությունների ու խմբերի էությունը։ Այդ թռուցիկներից ու կոչերից յուրաքանչյուրն ունի աղբյուրագիտական կարևոր նշանակություն։

АРМЯНСКИЕ КОМУНИСТИЧЕСКИЕ НОВОВЫЯВЛЕННЫЕ ЛИСТОВКИ

Е. С. ТОНЕРЯН

Резюме

В процессе исследовательской работы нами обнаружен ряд новых армянских воззваний и листовок периода 1902—1905 гг., выпущенных, главным образом, Тифлисским и Бакинским комитетами РСДРП.

Вводимые в научный оборот документы в свое время сыграли огромную роль в политической организации и воспитании армянских трудящихся. Они представляют определенный научный интерес.

¹² Նույն տեղում, ֆ. № 18007,

¹³ Տե՛ս նույն տեղում, ֆ. № 19366,

¹⁴ Նույն տեղում, ֆ. № 19365,